

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ (ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ) ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

1. ՀԱԳ(Գ)Մ անդամ ընդունելու որոշումը կայացնում է նախագահությունը՝ գործարարի համապատասխան դիմումի և Միության խորհրդի առնվազն երկու անդամների երաշխավորության առկայության դեպքում:

2. Անդամության թեկնածուի տվյալները և նրան երաշխավորող խորհրդի անդամների անունները Միության նախագահության հերթական նիստի օրակարգի հետ միասին ուղարկվում է Միության նախագահության և խորհրդի անդամներին:

3. Նախագահության նիստում անդամության վերաբերյալ կարող են ընդունվել հետևյալ որոշումները.

ա) ընդունել ՀԱԳ(Գ)Մ անդամ

բ) ընդունել ՀԱԳ(Գ)Մ անդամ՝ երեք ամիս փորձաշրջանով

գ) մերժել դիմումը

4. Սույն որոշման 3-րդ կետի «ա» ենթակետով որոշման դեպքում ՀԱԳ(Գ)Մ նոր անդամներին 5 (հինգ) օրվա ընթացքում տրվում է ՀԱԳ(Գ)Մ անդամի վկայական, իսկ «բ» ենթակետով որոշման դեպքում՝ փորձաշրջանը անցնելուց հետո:

5. Սույն որոշման 3-րդ կետի «գ» ենթակետի որոշման դեպքում մերժված անձը 2-րդ անգամ կարող է անդամության դիմում գրել 1 (մեկ) տարի հետո, եթե նախագահությունը այլ որոշում չի ընդունում:

6. ՀԱԳ(Գ)Մ նոր անդամը Միության խորհրդի կողմից հաստատված չափով մուտքի վճարը մուծում է 5 (հինգ) օրվա ընթացքում:

Մուտքի վճարը չմուծած նոր անդամին ՀԱԳ(Գ)Մ անդամի վկայական չի տրվում:

Մեկ ամսվա ընթացքում մուտքի վճարը չմուծած անդամի հարցը դրվում է ՀԱԳ(Գ)Մ նախագահության նիստի քննարկմանը:

7. ՀԱԳ(Գ)Մ անդամությունը հաշվում է ՀԱԳ(Գ)Մ անդամի ընդունելության մասին Միության նախագահության որոշման օրվանից, իսկ անդամավճարները սկսվում են գանձվել որոշմանը հաջորդող ամսվանից:

8. Փորձաշրջանով ընդունված անդամի հարցը վերջնականապես լուծվում է փորձաշրջանին հաջորդող Միության նախագահության նիստում:

Դրական որոշման դեպքում նշված անձի նկատմամբ սկսում է գործել սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը: